ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ VI, № 1, 1953 Биол. и сельхоз. науки

Վ. Պ. Բոյան

ՑԱՆՈՎԻ, ԹԱՎՈՏ ԵՎ ՊԱՆՆՈՆԱԿԱՆ ՎԻԿԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՍՈՐՏԱՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ ԿԱԼԻՆԻՆՈՅԻ ՓՈՐՁԱԴԱՇՏՈՒՄ

Վիկերի համեմատական սորտափորձարկումը կատարել ենք դաշտային և մարգագետնային կերարտադրության ինստիտուտի Կալինինոյի փորձադաշտում 1951 թվականին։

Փորձերը դրվել են 5—6 կրկնողությամբ, մարգերի մեծությունը եղել է 25—50 քառ. մետր։ Ցանքը կատարվել է, ինչպես սևահողում, այնպես էլ վարված ճմուտում, վարսակի և միամյա ռայգրասի հետ խառը, բաց որում վերցրել ենք խառնուրդի տարբեր հարաբերություններ։

Ցանովի (Vicia sativa L.), *Մ. Գ. Թումանյանի կողմից ստացված թավոտ* (Vicia villosa) *և պաննոնական* (Vicia Pannonica Gratz) *վիկերի համեմատական սորտափորձարկման արդյունքները բերված են № 1 աղյուսակում։*

Ինչպես երևում է աղյուսակից, ցանովի վիկի և վարսակի 150/75 խառնուրդում ծլումից մինչև ծաղկումը և ընդհանրապես վեգետացիայի տևողությունը 2—3 օրով կարճ է, քան նույն վիկի և վարսակի 120/75 հարաբերությամբ ցանված խառնուրդում։ Այս երևույթի հիմնական պատճառը այն է, որ առաջին վարիանտում վարսակի ցանքի նորման համեմատաբար պակաս լինելով, պակաս չափով է ազդում վիկի զարգացման վրա։

Պաննոնական վիկի և վարսակի խառնուրդում ծլումից ծաղկման տևողությունը ավելի կարճ է (56 օր), քան ցանովի և թավոտ վիկինը (58—63 օր)։ Բացի այդ պաննոնական վիկը 3—9 օրով ավելի վաղահաս է, քան փորձարկվող մյուս վիկերը։ Այնուհետև ցանովի և թավոտ վիկերը լեռնային սևահողերում ավելի վաղահաս են, քան վարված ճմուտում։ Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ չոր ափած ճմուտում սննդանյութերի մեծ քանակը և խոնավությունը երկարացնում են վեգետացիայի տևողությունը։

Ցանովի, թավոտ և պաննոնական վիկերի բերքի հավաքումը տարբեր տիպի հողերում, վիկի և վարսակի խառնուրդի տարբեր հարաբերության դեպքում, տալիս է հետևյալ պատկերը (աղյուսակ № 2)։

Սևահողում վիկի և վարսակի նույն խառնուրդները ավելի բարձր բերք են տալիս, քան չոր ափած ճմուտում։ Այսպես, օրինակ, ցանովի վիկի և վարսակի խառնուրդը չոր ափած ճմուտում տվել է 255 ց/հ կանաչ կամ 57,3 ց/հ չոր խոտ, մինչդեռ լեռնային սևահողում նույն խառնուրդից ստացվել է 312 ց/հ կանաչ կամ 72,2 ց/հ չոր խոտ։ Բերքի տարբերությունն կազմում է 57 ց/հ կանաչ կամ 14,9 ց/հ չոր խոտ։ Նույն բանն ստացվեց նաև տարբեր հողերում թավոտ վիկի և վարսակի խառնուրդի

փորձարկումից։ Տվյալներից ակնհայտ է, որ ճմուռում վիկի և վարսակի խառնուրդը առաջին տարին ավելի պակաս բերք է տալիս, քան վարված հողում։

Աղյուսակ 1

Ցանովի, թավոտ և պաննոնական վիկերի վեգետացիայի տևողությունը Կալինինոյի պայմաններում վարված ճմուռում և սևահողում

Խառնուրդ	Վարսակի, աշորայի և վիկի ցանքի նորման կգ *	Վեգետացիոն փուլերի տևողությունը շուռ տված ճմուռում		Վեգետացիոն փուլերի տևողությունը լեռնային սևահողում	
		ծլումից ծաղկումը	վեգետացիայի տևողությունը	ծլումից ծաղկումը	վեգետացիայի տևողությունը
		օրերով		օրերով	
Պաննոնական, ցանովի վիկի և վարսակի խառնուրդում					
Ցանովի վիկ + վարսակ	150/75	66	110	64	107
Ցանովի վիկ + վարսակ	120/75	68	111	66	109
Ցանովի վիկ + վարսակ	100/75	—	—	69	111
Պաննոնական վիկ + վարսակ	100/75	—	—	56	102
Թավոտ վիկի, վարսակի ու աշորայի խառնուրդում					
Թավոտ վիկ + վարսակ	120/75	58	106	58	104
Թավոտ վիկ + վարսակ	100/75	60	107	59	105
Թավոտ վիկ + վարսակ	80/75	—	—	58	105
Թավոտ վիկ + ձմեռային աշորա	100/30	—	—	54	104

Համեմատական փորձարկումից պարզվում է, որ թե՛ շուռ տված ճմուռում և թե՛ լեռնային սևահողում, ցանովի վիկի և վարսակի խառնուրդը ավելի բարձր բերք է տալիս, քան գարնանը ցանված թավոտ վիկը վարսակի հետ միասին։

Այսպես, ցանովի վիկը շուռ տված ճմուռում 150/75 հարաբերությամբ ցանված վիկի և վարսակի խառնուրդում տվել է 57,3 ց/հ, իսկ 120/75 խառնուրդում՝ 55,2 ց/հ չոր խոտ, մինչդեռ գարնանը ցանած թավոտ վիկը նույն հողակտորում 120/75 հարաբերության դեպքում տվել է 39,4, իսկ 100/75-ի դեպքում 37,7 ց/հ չոր խոտ։ Տարբերությունը կազմում է մոտ 18 ցենտներ չոր խոտ։ Նույն պատկերն է ստացվում, եթե համեմատում ենք ցանովի և թավոտ վիկերի բերքատվությունը լեռնային սևահողում։

* Համարիչում ցույց են տրված վիկի, իսկ հայտարարում վարսակի և ձմեռային աշորայի ցանքի նորմաները։

Ցանովի վիկի ամենաբարձր 150/75 խառնուրդից ստացվել է 312 ց/հ կանաչ կամ 72,2 ց/հ չոր խոտ, իսկ թավոտ վիկի ամենաբարձր 120/75 խառնուրդից՝ 266,4 ց/հ կանաչ կամ 60,7 ց/հ չոր խոտ։

Աղյուսակ 2

Ցանովի, թավոտ և պաննոնական վիկերի համեմատական սորտափորձարկումը և խառնուրդ ցանքի նորմայի ազդեցությունը խոտի բերքատվության վրա ջրու տված ճմուտում և սևահողում (ց/հ)

Խառնուրդը	Վարսակի, ռայգրասի և վիկի ցանքի նորման կգ/հ *)	Խոտի բերքը ջրու տված ճմուտում		Խոտի բերքը սևահողում		Խոտի բերքի հավելում % %	
		Թաց մասսա	չոր խոտ	Թաց մասսա	չոր խոտ	ջրու տված ճմուտում	լեռնային սևահողում
Պաննոնական, ցանովի վիկի ու վարսակի խառնուրդում							
Ցանովի վիկ + վարսակ	150/75	255	57,3	312	72,2	105	131
Ցանովի վիկ + վարսակ	120/75	231,1	55,2	242,0	54,9	100	100
Ցանովի վիկ + վարսակ	100/75	—	—	243	54,7	—	91
Պաննոնական վիկ + վարսակ	100/75	—	—	320	73,2	—	134
Թավոտ վիկի, վարսակի ու ռայգրասի խառնուրդում							
Թավոտ վիկ + վարսակ	120/75	182,5	39,42	266,4	60,7	104,6	140,8
Թավոտ վիկ + վարսակ	100/75	164,2	37,7	196,2	43,1	100	100
Թավոտ վիկ + վարսակ	80/75	—	—	172	39,9	—	90,2
Թավոտ վիկ + միամյա ռայգրաս	100/30	—	—	312	73,6	—	170,0

Թավոտ վիկի և վարսակի խառը ցանքի կանաչ մասսայի բերքը 45,6 ց/հ-ով պակաս է ցանովի վիկի և վարսակի կանաչ մասսայի բերքից, իսկ չոր խոտի բերքի տարբերությունը կազմում է 11,5 ց/հ։

Միանգամայն ակնհայտ է, որ Կալինինոյի շրջանում անհրաժեշտ է ընդլայնել ցանովի վիկի և վարսակի մշակությունը, սերմանյութ ընտրելով տվյալ տեղական բարելավված պոպուլյացիայից, իսկ թավոտ վիկի գարնանացանը այստեղ հեռանկար կունենա միամյա ռայգրասի խառնուրդում։

Թավոտ վիկի և միամյա ռայգրասի խառնուրդը գարնանը ցանելիս ստացվել է բավական բարձր բերք — 312 ց/հ կանաչ կամ 73,6 ց/հ խոտ, որը մեզ իրավունք է տալիս եզրակացնելու, որ թավոտ վիկի գարնանային մշակությունը տվյալ շրջանում նպատակահարմար է միայն

* Համարիչում ցույց են տրված վիկի, իսկ հայտարարում վարսակի և միամյա ռայգրասի ցանքի նորմաները։

ռայդրասի խառնուրդում։ Թավոտ վիկի և միամյա ռայդրասի խառնուրդում խոտի բարձր բերքի ստացումը բացատրվում է նրանով, որ այս դեպքում թե վիկի և թե ռայդրասի բույսերը ավելի լավ լուսավորված լինելով (քանի որ ռայդրասի տերևները ավելի նեղ են, քան վարսակինը) լավ են թփակալում և տալիս են փարթամ ճյուղավորություն ու մեծ մասսա, որի հետևանքով ստացվում է չոր խոտի և կանաչ մասսայի բարձր բերք։

Կատարված փորձերից պարզվում է նաև, որ ցանքի նորման չափազանց մեծ ազդեցություն է ունենում վիկի և վարսակի խառնուրդի բերքատվության վրա (աղյուսակ № 2), բայց որում, որքան վիկի նորման բարձր է լինում, այնքան բարձր է լինում չոր խոտի և կանաչ մասսայի բերքը։ Այս նկատվում է ինչպես ցանովի, նույնպես և թավոտ վիկերի ցանքերում, բայց որում, սեռնդում այդ տարբերությունն ավելի ուժեղ է արտահայտվում, քան շուտ տված ճմուտում։

Երևանում կիրառվող ցանքի նորման ընդունելով 100% և մեր վերցրած մյուս նորմաները համեմատելով վերջինների հետ ստանում ենք հետևյալը։ Ցանովի վիկի ցանքի նորման 30 կիլոգրամ ավելացնելիս կանաչ խոտի բերքը ավելանում է 70 ցենտներով, իսկ չոր խոտի բերքը՝ 31 տոկոսով։ Նույն բանը նկատվում է նաև թավոտ վիկի ցանքերում։ Այսպես, օրինակ, թավոտ վիկի զարնանային ցանքում, վիկի ցանքի նորմայի 20 կիլոգրամ ավելացումը կանաչ մասսայի բերքի հավելում է ավել 70,2 ցենտներ, իսկ չոր խոտի բերքը ավելացել է 40,8 տոկոսով, մինչդեռ ցանքի նորման 20 կիլոգրամ պակասացնելու դեպքում կանաչ մասսայի բերքը պակասել է 24,2 ցենտներով, իսկ չոր խոտի բերքը՝ 10 տոկոսով։

Ելնելով վերոհիշյալից գտնում ենք, որ անհրաժեշտ է լայն զրաղվել վիկի խառնախառնուրդների ուսումնասիրությամբ, ճշտելու համար խառնուրդի այն սահմանը, որից կստացվի կանաչ մասսայի և խոտի ամենաբարձր բերքը։ Մեր ցանքերում ամենալավ արդյունքը ստացվեց ցանովի վիկի 150 կգ/հա և վարսակի 75 կգ/հա խառնուրդից։ Երևանում ցանովի վիկի ցանքի նորման ընդունված է 120 կիլոգրամ, ուստի անհրաժեշտ ենք համարում առաջարկել վիկի ցանքի նորման 30 կիլոգրամով ավելացնել, իսկ վարսակ վերցնել հեկտարին 75 կիլոգրամ, այսպիսի խառնուրդը ընդունված նորմայի համեմատությամբ տալիս է կանաչ մասսայի և չոր խոտի ավելի բարձր բերք։

Ցանովի, թավոտ և պաննոնական վիկերի համեմատական սորտափորձարկումից պարզվեց, որ Կալինինոյի պայմաններում զարնանը ցանելիս պաննոնական վիկի և վարսակի խառնուրդը 18.5—30,1 ցենտներով ավելի բարձր բերք է տալիս, քան ցանովի և թավոտ վիկերը։ Այսպես, օրինակ, ցանովի վիկը նույն պայմաններում 120/75 կգ/հա նորմայով ցանած վիկի և վարսակի խառնուրդում տալիս է 242 գ/հ կանաչ և 54,9 գ/հ չոր խոտ, մինչդեռ պաննոնական վիկի և վարսակի 100/75 խառնուրդում ստացվել է 320 գ/հ կանաչ և 73,2 գ/հ չոր խոտի բերք։ Պաննոնական վիկը 1950 թվականին նույնպես բարձր բերք տվեց՝ 71գ/հ չոր խոտ։

Ելնելով վերոհիշյալից նպատակահարմար ենք համարում առաջարկել նաև պաննոնական վիկի մշակությունը Հայաստանի լեռնային խոնավ շրջաններում, որպես գարնանացան։

Պաննոնական վիկից լավագույն սորտեր ստանալու նպատակով, մասայական ընտրության միջոցով, առանձնացրել ենք մի շարք բույսեր, որոնց հետ սելեկցիոն աշխատանքը շարունակվում է։

Մեր նախնական եզրակացություններն են.

1. Վիկի գարնանային մշակությունը Հայաստանում հեռանկարային է լեռնային խոնավ և բարձրագիր շրջաններում (Կալինինո. Մարտունի, Զառ, ծովի մակերևույթից 1850 մետր բարձրության վրա)։

2. Լեռնային խոնավ շրջաններում տեղական վիկի և վարսակի խառնուրդը գարնանը ցանելիս ավելի բարձր բերք է տալիս՝ 72,2 ց հ չոր խոտ, քան Քաղաք վիկի և վարսակի խառնուրդը 60,7 ց հ, ուստի անհրաժեշտ է տվյալ շրջանում ընդլայնել ցանովի վիկի գարնանային մշակությունը տեղական պոպուլյացիայի բարելավված սերմանյութով։

3. Լեռնային խոնավ շրջաններում Քաղաք վիկի գարնանացանը հեռանկարային է միամյա ռայգրասի խառնուրդում։ Մեր փորձերում վիկ 120 կգ և ռայգրաս 30 կգ խառնուրդից ստացվեց 312 ց կանաչ կամ 73,6 ց չոր խոտ հեկտարից, մինչդեռ վիկ 120 և վարսակ 75 խառնուրդի ցանքից ստացվեց միայն 266 ց կանաչ և 60,7 ց չոր խոտ՝ հեկտարից։

4. Կալինինոյի պայմաններում պաննոնական վիկի և վարսակի խառնուրդն ավելի բարձր բերք է տալիս (73,2 ց հ չոր խոտ), քան ցանովի վիկի և վարսակի նույն նորմայով կատարված ցանքը (54,7 ց հ չոր խոտ), ուստի անհրաժեշտ է պաննոնական վիկը մացնել տվյալ շրջանի միամյա կուլտուրաների ասորտիմենտի մեջ։

5. Ցանովի և Քաղաք վիկերի ցանքերի նորմայի 20—30 կգ հ բարձրացումը տալիս է 70 ց հ կանաչ մասսայի և 20 ց հ չոր խոտի հավելում, ուստի անհրաժեշտ է տվյալ շրջանում ցանովի վիկի ցանքի նորման վերցնել ոչ թե 120 կգ հ այլ 150 կգ հ, իսկ վարսակ՝ 75 կգ հ։

Հայկական ՍՍՌ Գյուղ. մինիստրության
Դաշտային և մարգագետնային կերաբույսերի ինստիտուտ

Ստացվել է 12 VII 1957

В. П. Балян

Сравнительное сортоиспытание посевной, мохнатой и паннонской вики в условиях Калинино

Резюме

Из однолетних кормовых культур в лугостепной зоне более всего культивируются вика овсяная—мешанка. С целью получения новых высокоурожайных сортов вик из местных популяций для данного района нами было произведено сравнительное сортоиспытание посевной, мохнатой и паннонской вики, которое дало положительные результаты.

В результате сортоиспытания выяснилось следующее:

1. Весеннее возделывание вики в Армении целесообразно во влажных горных районах.

2. В условиях влажной горной зоны Армянской ССР смесь местной вики с овсом более урожайна (72,7 ц/га), чем смесь мохнатой вики с овсом (60,7 ц/га сухого сена). Поэтому рекомендуем расширить посевы местной популяции яровой вики.

3. В условиях влажной горной зоны Арм. ССР весенний посев мохнатой вики перспективен с однолетним райграсом. В наших опытах смесь вики мохнатой с райграсом дала 312 ц зеленой массы или 73,6 ц сухого сена, между тем смесь вики с овсом дала 266 ц зеленого или 60,7 ц сухого сена с га.

4. Смесь паннонской вики с овсом в условиях Калинино более урожайна (73,2 ц/га сух. сена), чем смесь посевной вики с овсом (54,7 ц/га сух. сена) при тех же нормах высева. Поэтому в вышеуказанном районе можно внедрить паннонскую вику.

5. Увеличение норм высева посевной, мохнатой вики в количестве 20—30 кг/га дает повышение урожая зеленой массы на 70 ц/га и сухого сена на 20 ц/га. Поэтому норма высева яровой вики в данном районе должна быть доведена до 150 кг/га в смеси с 7,5 кг/га овса, вместо принятой в районе 120 кг/га вики и 80 кг овса.